



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«11» հունիսի 2018թ. N: 31 ք.Գյումրի

## ՀՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2018 թվականի հունիսի 11-ի զեկուցագիրը.

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստան Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի մոտ կայանալիք խորհրդակցությանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 1 օր՝ 2018 թվականի հունիսի 12-ին:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ զիջու է

